

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԵՍՈՒՄԱՐԻՆ

Փետրուար ամսուան մէջ երկու նշանաւոր դիպուած հանդիպեցան. որ ըրողը աշխարհի քաղաքական մտադրութիւնը գրաւեց. և զոնժէ ամբողջ ամիս մը զանազան զբաւոր յօդուածոց եւ խօսակցութեան նիւթ մատակարարեց: Այս է Աստորիոյ -Հունգարիոյ եւ Գերմանիոյ մէջ դուռնա նիգակցութեան դաշանց հրատարակութիւնն ու Պիզմարց իշխանին նշանաւոր ծանախօսութիւնը:

Որովհետեւ շատ ժամանակէ վեր այլեւայլ տարածման գաղափարներ տարածուած էին աստորիական-գերմանական նիգակցութեան դաշանց վրայ 1879 էն սկսեալ զաղտնի պահուած բովանդակութիւնն ամառս 3ին պաշտօնական լրագրաց մէջ հրատարակուեցաւ Պերլին. Վիեննա եւ Պոտսդամէջ ի միասին:

Այս դաշանց, որ դուռնա է յանուն երկուց Վենսպագաց Աստորիոյ -Հունգարիոյ Արտաքին գործոց պաշտօնէին՝ Աստորաշի կոմսին եւ Գերմանիոյ մեծ դեսպանին՝ Ռայս իշխանին մէջ է ամեն ստորագրութեամբը ինքնաբարձ է յամբ 1879 -Հուն. 7. էական նպատակն է վարել երկրին ու ազգաց խաղաղութիւնն եւ նաեւ Պերլինի դեսպանաժողովին հետեւութեամբն հաստատուած եւրոպական խաղաղութիւնը պահպանել: Իսկ միանական նպատակն այս է: Երբ միմեանքն ժամանակ գերմանական եւ ռուսական լրագրաց վէճերն անվերջանալի էին եւ Ռուսիոյ զինուորական պատրաստութիւններն օր քան զօր էր առաւելուին, որեւիցէ վասնզի առանց աննշու համար միաբանեցան երկու տէրութիւնք զիրար պաշտպանել եւ իրեն մի տէրութիւն պատուագրել եւ խաղաղութեան դաշինք դնել: Այսինքն՝ ի դիպումի՝ զոր չեն կարծիր, երկու տէրութիւններն մին Ռուսիոյ կողմանէ յարձակում կ'ը, կը պարտաւորին երկու տէրութիւնք նա իրենց բովանդակ գիտութեամբ զօրութեամբ հաստատուած թշնամոյն դէմ կռուել եւ դաշինքն աւելի միասին դնել կամ չընել: Դարձեալ թի՛ թի՛նք իրենց տէրութիւնն այս երկու դաշանկից տէրութեանց միոյն վրայ յարձակել, միայն ոչ միայն յարձակողին պիտի չօգնէ, այլ եւ իրենց քարեացակամ չէ՝ զօրութիւնն եւ պիտի ցուցնէ իւր դաշնակցին: Բայց թի՛ սոյն յարձակող տէրութիւնը Ռուսիոյ կողմանէ իրական զինուորական օգնութիւն տանէ, նախընթաց յօդուածոյն մէջ իշխատական պայմանաց համեմատ՝ դաշնակցին իւր բովանդակ զինուորական օգնութեամբը յարձակում կ'որոշն պիտի օգնէ:

Ասորք մնաւ նիգակցութեան դաշանց բովանդակեւ լուծան կետերը, որոնցմէ յայտնի կը տեսնուի, թէ երկուց տէրութեանց միտքն է իրենց զիրենց պաշտպանական եղանակաւ ապահովել որեւէ յարձակման դէմ, բայց ոչ միանգամայն այս կամ այն տէրութեան դէմ՝ յարձակողական համար իրարու հետ միասնալ:

Սոյն դաշանց հրատարակութեան հետ սերտ յարաբերութիւն ունի Պիզմարց իշխանին նշանաւոր եւ դաքսգլուխ կազմող ծառախօսութիւնը, զոր ամսոյս ճին պետութեան խորհրդանշանն մէջ խօսեցաւ գերտնօրական նպատակաց համար տէրութեան նմանոր 281 միլիոն մարքի փոխառութեան ժամանակ, որուն մեծագոյն մասը պիտի գործածուի ըստ իւր կարգադրութեան կազմելի զաւտապահ զօրաց նոր զնգերուն համար:

Իշխանն այս ծառախօսութեան մէջ իւր գերազանց քաղաքագիտութեամբը գոհացողից տեսութիւն մը մընէ գրեթէ վերջն 40 տարուան միջոցին Եւրոպայի մէջ հանդիպած քաղաքական դիպումնոց, բայց ի մասնաւորը Բրուսիոյ ու Գերմանիոյ վարած քաղաքա-

կանութեան վրայ. դարձեալ Ռուսիոյ նկատմամբ Գերմանիոյ քննած քարեակամական ընթացքին, ներկայ ընդհանուր քաղաքական վիճակին եւ ի մասնաւոր Աստորիոյ -Հունգարիոյ եւ Գերմանիոյ մէջ դուռնա նիգակցութեան դաշանց վրայ, որուն նպատակն ու հրատարակութեան վախճանը իմ մեզնէ ու կը յայտնուի, թէ ոչ միայն պատմաբան մը չէ այս՝ ուղղեալ իրենց տէրութեան, այլ մանաւանդ իրաց վիճակը լուստարողով քննելու մը քիչ մը հասարակաց խաղաղութիւնը պահպանելու: Հուսկ յետոյ գալով սոյն զինուորական նոր կարգադրութեան ու փոխառութեան, կը յայտնէ թէ այս եւս ապացոյց մ'է հասարակաց խաղաղութիւնը պահպանելու. վասն զի այն ժամանակ Գերմանիա կարող է շարել ի ծակատու միլիոն մը քաշակերթ զինուորաց մէկկողմն. ու միկոն մը նոյնպիսի զինուորաց միւս կողմն. բայց աստի միկոն մ'են աւանտի զինուորաց կրնայ ի հարկաւորութեան հանել ի ծակատ: Այս անմեական ապահովութիւնն ոչ միայն Գերմանիոյ վրայ իւր քարե-քարոյ ազդեցութիւնը կ'ընէ եւ ազն երեսակաւորութիւններ կը պահպանէ, այլ նաեւ թշնամաց զգուշութիւնն ու երկուց կը յանձնէ: — Այսպէս Պիզմարց:

Մենք մեր խորհրդածութիւնն այս երկու գլխաւոր դիպումնոց վրայ զանց կ'անենք այլ եւս պատմա-նաց համար. եւ կը յուսանք որ այն անմիջից որոնց նոյն խօսակցութեան բովանդակութիւնն ըստ մեծի մասին կարգացած են. մեր ընելու խորհրդածութիւններն աղ-ղէն մասամբ իւրեք ըրած են: Միայն կը ծանուցանենք, որ սոյն նշանաւոր ծառախօսութեան արդիւնքն անհամեմատ մեծ եղաւ, վասն զի զոնժէ բովանդակ աշխարհ լիա-բերան հռչակեց Պիզմարց իշխանին խորին քաղաքա-կանութիւնն, եւ ամէնքն այս երկու դէպքերն իրենց զբաւական խաղաղութեան պահպանման նկատման:

Գերմանիոյ թաղաժառանգին հիւանդութեան վրայ գրեթէ երկու ամէն ի վեր գոհացողիչ լոնք փառել-ած էին, բայց քանի կը շարքի յառաջ կ'ողորդել պիտի այնչափ զայրացած էր, մինչեւ հարկադրեցան ներկայ եղող բժիշկը շուգիողով վտանգաւոր հատման ծնունդ-կել: Խէ՛ն հատումն յաշնոյն է, սակայն թաղաժառանգին ատողչութեան լոնքն երկբայական են եւ շատ անգամ՝ իրարու հակադաս: Անշուշտ առաջինը ամիսը հատու վիճի մը կու տայ ախտին ծշմարտու վիճակին վրայ:

Մնալս վերջ իշխատակեցեց, Պիզմարց իշխանին ծառախօսութիւնն ետեւ Ռուսիոյ մեծ դեսպանը՝ Շու-վալով կոմս Պիզմարց իշխանին եւ անոր որդւոյն հետ քանակութեան մէջ մտած է Պուկաղիոյ վիճակը դեսպանագիտական իրաւի ուղիղ ծանուցան բերելու հա-մար: Ըստ նորագոյն լոնք՝ Ռուսիոյ մեծ դեսպանը Նեխ-տով քարեքաղտն Դրամ առաջնորդ է, որ Պուկաղիոյ ապօրինաւոր դուռնեան դարձնէ իւր մտադրութիւնն եւ վայրկեան մը յառաջ իրենց կարգը դնէ: Սոյն առա-ջարկութիւնն ըրեր են նաեւ Գաղղիոյ եւ Գերմանիոյ մեծ դեսպանները:

Իսկ Անգղիոյ կառավարութեան նկատմամբ ըստ քաւական ծանօթ եղած լոնքն յայնմ կը յիշեցնի, որ Անգղիա Պուկաղիոյ համար ամենափողոցի փոփոխու-թիւնն իսկ Պերլինի դեսպանաժողովին որոշմանց մէջ քաղաքականապէս կը մերժէ:

ՀԻՐԱՅՐԱՐԻՆ ԵՒ ԳՐԱՆՈՒՆԵՆՈՅԻ ԽՐԲՐԵԴԻ

Հ. ԻՐԱՓԵՏԵԼ Վ. ՊԵՐՐՈՆԶ

ՎԻՆՆԵ, ՄԻԻՐԱՐԵՆԵ ԶԱՐԸՆ (W. HEINRICH)